է միջադեմական աւանդութիւնը իւր յարդարանքներով։

Պողավանքի սճով եւ ձեւով մի ուրիշ, նոյնչափ, գուցէ եւ աւելի հին եկեղեցի գրանելում էր Աբարանի Ծառայիշէն, այժմ Մոլլայ Ղասրմ, գիւղում, Գնթունեաց շէնք։ Գնթունիք, ինչպէս եւ Ամատունիք, պատկանում էին հին նախարարական տներին։ Գնթունեաց կալուածներն ընկնում էին Արագածի արեւելեան լանջերին, ներկայ Աբարանի շրջանում, սահմանակից Ամատուններին, որոնց կեդրոնները Օշականը եւ Պողավանքն էր, ինչպէս տեսանք։ Գնթունեաց կեդրոնը պիտի լինէր Քասախը (այժմ Բաշ Ա-

գերեզմանական մի կոթողի մնացորդ (Պատկեր 19), բայց եւ Պողավանքի տիպի մի եկեղեցի, որ ժամանակակից էր, գուցէ, մի քիչ էլ հին նորանից։ Սա աւելի փոքր է քան Պողավանքը, բայց հիւսիսային պատից դատելով, ճիշդ նոյն կազմութիւնն ունէր ներսից, ինչպէս Պողավանքը։ Միւս մասերը այս հետաքրքրական շէնքի, տարաբաղդաբար, քանդել են նորոգութեան ժամանակ։ Աջ դասի որմայեցի երեսին խոշոր եւ գեղեցիկ երկաթագիր տառերով գրուած է «ԳՐԻԳՈՐ ԳՆԹՈՒՆԵԱՑ ՏԷՐ»։ Նոյնանուն Գնթունի իշխան յիշւում է Ժ. դարում, Հասանի եղբայրը, որ Աշոտ Երկաթի հակառակորդն էր,*

Պատկ. 20

բարան կոչուած), իւր երկու մեծ եւ փոքր բազիլիք ամենահին եկեղեցիներով։ այստեղ դատանք Տրդատի յունարէն արձանագրութիւնը Գնթունեաց յիշատակութեամբ, որ փոխադրուեցաւ Էջմիածնի թանգարանը։ Նրանց սահմանների մէջն էր հին Եղիպատրուշը եւ ներկայ Տամջլուն, որի տներից մի քանիսը չինուած են ամենահին պալատի կամ բերդի շէնքի վերայ, նաեւ Ժ. եւ յետագայ դարերի յուշարձանների կարեւոր մնացորդներով։ Սրանից քիչ հարաւ, մօտաւորապէս երեք մղոն հեռաւորութեամբ, գտնւում է հին Ծառայիշէնը (այժմ Մոլլայ Ղասրմ կոչուած), ուր բազիլիք մի եկեղեցի կար, խոյակները Քասախի կամ Տիկորի նման եւ հին

բայց այս Գրիգորը եկեղեցու շինողը պիտի լինի։ Եկեղեցին հիւսիսային պատի արտաքին որմայեցիների պահպանութեամբ, նման Երերոյքի եւ Գառնիի հիւսիսային պատերի որմայեցիներին, ապացոյցն է տալիս, որ նա Զ.–Ե. դարի գործ է եւ ոչ Ժ. դարի։ Ծերունիների ասելով գմբեթաւոր էր։

Ցիշատակելի են նաեւ Աստուածընկալի եւ յատկապէս Ամնայ գիւղի երկու փոքրիկ բազիլիկները, որոնց հարաւային դրոնների ճակատաքարերը (Պատկ. 20) նոյն քանդակներն ունին, ինչ որ եւ Քասախը, նոյն նաեւ խոյակով, որ նմանութիւն է բերում

---

*Յովհ. Կաթուղիկոս. եր. 179–180։